

## ՎԵՐԺԻՆ ԽՕՍՔ „ՇԱՐԱԿԱՆԻ“-Ի ՄԱՍԻՆ.

Արարատիւ 1904 թ. յուլիս-օգոստոսի համարում «Շարականի մասին» խորագրով յօդուածո վերջացրել է հետևեալ խոռքերով. «Տեսնենք, մանրամասն համեմատութիւնը ինչ ցոյց կտայ»:

Միոր չունենալով մանրամասն համեմատութեան մէջ դնելու Շարական-ը նարականի հետ,—քանի որ մի այդպիսի ծանր գործ բարեխիղճ ու խիստ վերաբերմունք է պահանջում, — ես այս անգամ տալիս եմ իմ արած հարսկանցի համեմատութեան փաքրիկ տրդիւնքը:

Նատ գեղեցիկ ու օգտակար միոր է յղացել պրօֆ. Մկրտիչ Էմին, գնելով մեր գաւանութիւնով շահագրգովող ռաների առջեր մեր նարականի ոռւս թարգմանութիւնը, որ նա արել է արանից 25 տարի առաջ, այն է՝ Ի. Տրօյիցկու «Изложение вѣры Церкви Армянскія, пачертанное Нерсесомъ, каѳоликосом армянскимъ по требованію Боголюбиваго государя грековъ Мануила, и напечатанное въ 339 ѣрես ունեցող գրքի վերջին տողերում այսպէս է գրում. «Կրկնում ենք, այսոք է ցանկանալ, որ հայոց եկեղեցին իր սեփական, բոլորովին ազատ ու անկախ կամքով նորից տչքի անց կացնի իր գաւանական տառուածպաշտական գրքերը ու չնջի նրանց միջից միաբնակութեան բոլոր հետքերը, այն ժամանակ . . . հայոց եկեղեցու՝ Պրավուլավ եկեղեցուն միացնելու գործը ըստ ինքեան գլուխ կդոյ, Դա միայն ժամանակին հարց կլինի»:

Բայց Շարականի մասին խոռելուց առաջ ես կարեւոր եմ համարում բերել այստեղ նրա շահագրգիռ առաջաբանի թարգմանութիւնը, բաց թողնելով միայն այն կտորները, որոնցով թարգմանողը ոռւս կարդացողներին ծանօթացնում է մեր շարականների սկսուածքների նշանակութեանը, — և ծանօթութիւնները:

Ահա այդ առաջարանք։ —

«Այն գիրքը, որի երոպական լեզուով արված լրիւթարգմանութիւնը հանդէս է գալիս առաջին անգամը, հայոց եկեղեցու աստուածպաշտական գրքերից մէկն է։ Սա մի հոգեառ գանձարան է, որի մէջ վերջին V—XIII դարերի լաւագոյն ներկայացուցիչները անդադար մացըել են իրանց տուրքերը։ Դրա ոկիզը դրել են ու Մեսրոպ ու ու Մովսէս Խորենացի և վերջացրել են Վարդան Մեծ ու Յովհան Երզնկացի։

«Առօբնան արմանակ պետք է հրաժարական թիւնից եօթանասուն ու ինը տարի անցնելուց յետոյ \*), ուսու ուսումնական աշխարհին առաջարկվում է յեշված եկեղեցու մէկ ուրիշ աստուածպաշտական գիրքը, որ անցել է դարերի մի երկայն շարք։ Կարծում ենք, որ սա քիչ թէ շատ կանոնաւոր լոյս կափոխ նրա դաւանանքներից ամենագլխաւորների վրա։ Իրան աստուածպաշտական գիրք, որ ընդունել են, առանց բացառութեան, հայոց եկեղեցու բոլոր հետեւողները, սա իրաւունք ունի պահանջելու, որ իրան լինվ հաւատ ընծայվի։ Սա ոչ մի տեղ ու ոչ մի ժամանակ չէ արժանացել այն բախտին, որին արժանացել են դաւանագրքերը հանրապէս և ներսէն Շնորհալի կաթողիկոսի Դաւանագիրքը (1166—1173) ու նրա յաջո, դ Դրիգորինը IV (1173—1193) մասնապէս, որը հայոց կիլիկեան թագաւորութեան սահմաններից դուրս համակրութիւն չէ դաել։

Այս գիրքը, իր բովանդակութեան նկատմամբ, չունի այսպէս ասված, բացատրական թերթ։ սա ինքը կլսօսի իր մասին Ուսու կարդացողը համարձակ կարող է քաղել սրանց մի քանի ապացոյցներ հայոց եկեղեցու վարդապետութեան մասին, նրա եղբակացութիւններն այն ժամանակ հիմնված կլինեն հաստատ՝ և ոչ որ և է դա-

\* ) Այդ գիրքը հայերէնից ռուսերէն թարգմանել է Յովհան Արքեպիսկոպոս Արքութեան—Երկայնաբազուկ և լոյս է տեսել Ա. Պետերը բգում 1799 թ.։

ւանագրքի երերուն հողի վրաւ Այս ժամանակ այս եկեղեցու որդին՝ էլ չի ասի, — ինչպէս նա մինչև հիմա բոլոր բովին իրաւացի նկատում էր այն եզրակացութիւնների վերաբերմամբ, որ մի քանի տառմետականներ անում էին դաւանագրքից, — թէ այդ վերջինը պարունակում է իր մէջ ոչ թէ իր եկեղեցու վարդապետութիւնը, այլ՝ այս-ինչ հոգեռօրականի կամ մողովի անձնական հայեացը, որ ընդգունել է նրա ժաղովրդի յայտնի մոտը, այն էլ՝ առժամապէս: — Այս պատճառով մենք թողնում ենք, որ ինքը դիմքը ծանօթացնի ուուս կարդացողին այն եկեղեցու վարդապետութեանը, որի ինքը արտայայտութիւնն է, իսկ մենք կտանք նրան մի քանի անհրաժեշտ տեղեկութիւններ նրա արտաքին կողմի ու մեր թարգմանութեան մասին:

Նարականը դեռ ևս XII դարում յայտնի էր բիւզանդա-յունական եկեղեցու ներկայացուցիչներին: Այս եւելում է Մանուէլ I կոմմենտ կայսրի թղթից, որ ուղղված էր Գրիգոր I<sup>o</sup> կաֆողիկոսին՝ յունաց ու հայոց եկեղեցիների միացման առիթով ունեցած յարաբերութիւնների ժամանակի: Այդ թղթում կայսրը, ի միջի ոյլոց գրում էր, «Յանին զայս, զի զգայթակղութիւնն, որ կայր ի սիրոս մեր՝ յերգս ձեր և ի պաշտամունս որ առ Աստուած, բժշկեցաք քննութեամբ, վասն զի ի մէջ ածաք և ծանեաք երեւլապէս ի նոցանէ, զի ի բազում՝ տեղիս Երկու բնութեամբ զմի Քրիստոսն նոքոք փառաւորէք, և պարտ է՝ զայս ուղղութիւնս, որ իրրե զթաքուն է՝ ամենեցուն տաել և ցոցանել»: Բիւզանդական կայսրի այս խելացի ցանկութիւնը միմիայն հիմա է իրականանում, և օթ դարից աւելի անցնելուց յետոյ:

Միայն յոյները չեն, որ իրանց ուշքը կենարոնացնում էին Նարականի վրա: Ներկայ դարում շատ անգամ էն դիմել նրան արեմոեան հայագետները: Բացի մի քանի անգամ նրա մասին հայ գրականութեան մէջ յայտնած ուսումնականների կարծիքներից, գրանցից մի քանիսը թարգմանել են նրանից կամ առանձին կանոններ, կամ ամբողջ բաժիններ, ինչպէս, օրինակ, Քրտնացի միսիօնէր:

Eugène Boré, *Lուվենի համալսարանի պրօֆէսոօր Felix Nèye, իտալացի Luigi Carrer և ուրիշները:* Հայերից անցեալ 1877 թւին, *Վենետիկի ուսումնական միսիթարեանչները* Պիոս IX-ի 50-ամեայ եղիսակոպոսութեան տարեդարձի տօնին ներկայացրին կաթոլիկ եկեղեցու պետին, իգրև նրան վայել մի պարգև, մի և նոյն դրքից հանած լատին թարգմանութեամբ Սուրբ Աստուածածնին նուիրված Կառնոններն ու Երգերը, Ռուսերէն թարգմանված են՝ Յովոէփ Միզութեան արքեպիսկոպոսի ձեռքով 2 Երգ, որոնք մտել են Հայոց պատարագի արարողութիւնը XIII դարում, և մեր վերսիայի 14 կանոն, որոնք հիմա նորից աչքի են անց կացված ու մտած ներկայ հրատարակութիւնը:

**Նարական բառի բացատրութիւնը** մենք մանրամաս նօրէն տվել ենք մի ուրիշ տեղ, ուր և կարող է դիմել կարդացողը, Այսուեղ մենք կնկատենք միայն, որ Նարական, ինչպէս և դրա միւս ձեւ՝ Նարակնոց, նշանակում է մի «Գիրք, որ պարունակում է իր մէջ շարականներ կամ երգեր, ի հարկէ, հոգեոր» Այս բառի արմատն է «շէր»—երգ. դա սէմիտ ծագում ունի, երկում է Հայերէնում XII դարում և գործ է ածվում թէ ինչպէս յատուկ ու թէ ինչպէս հաւաքական անուն, առաջին դէպքում նշանակում է յայտնի աստուածապաշտական գիրքը, որ դըրքած է կարդացողի առջևը, երկրորդում՝ նա յոքնակի ձեն էլ ունի և նշանակում է «հոգեոր երգ», որ միմիայն Նարականումն է գտնվում:

Առաջարկված թարգմանութիւնու արված է այն դրքից, որ լոյս աշխարհ է մտել Կոնստանդնուպօլսում 1853-ին՝ Անհրաժեշտ տեղեկութիւնների համար մենք ձեռքի տակ ենք ունեցել նոյնպէս մի ուսումնական հրատարակութիւն, որին լիսկ կարելի է վստահանալ, և բացատրել է ուսումնական Միսիթարեան՝ Հայր Գաբրիէլ Աւետիքեան։ Դա հրատարակվել է 1814-ին՝ բոլոր տպված Նարականներն ու Վենետիկի Միսիթարեան միաբանութեան մատենագարանի 33 ցուցակները համեմատելուց յետոյց Այդ յարգելի աշխատութեան հետ մենք շարունակ խորհուրդ ենք

արել, որովհետեւ ինքը բնագիրը շատ տեղերում ունի մեծ, եթէ չասենք անյաղթելի, գժուարութիւններ քերականական շինուածքի (structure) ու անասելի մեզմ լինեալու պատճառով, որի մասին կարող են վկայել Շարականի լեզուին ծանօթ մարդիկը — Մենք պէտք զգացած յամանակ, մէկ-մէկ նայում էինք Լաղարեան ճեմարանի երկու ձեռագիրների, Ամստերդամի՝ 1702 թ. հին հրատարակութեանը և, վերջապէս, Էջմիածնի 1875-ի տպին՝ in-folio:

Կամենալով տալ այս գրքի, ոյսպէս ասած, ճիշտ պատկերը, մենք աշխատել ենք մեզ մօտիկ պահել բնադրին, այս պատճառով շատ տեղ իսկականի գեղեցկութիւնը պէտք է զոհէինք թարգմանական ճշտութեանը. մենք այս արել ենք, ուզենալով կարդացողի ձեռք տալ մի այնպիսի դիրք, որին նա կարողանար վստահութեամբ մօտենալ:

Բնադրի ծանօթութիւնները մեծ մասամբ առնված են հ. Գարբիէլի բացատրութիւնից, բայց զգալի կերպով կրծատ ձեռվ.

Գրքի մէջ կարդացողը կգտնի փակագծերում մէջ քերված բառեր, որ մենք դրել ենք միտքը պարզ արտայայտելու համար. թէ դրանք ինչքան են աջող, այդ թողնում ենք, որ նա ինքը դատի:

Մոսկա, սեպտեմբեր 1878 թ.

\* \* \*

Շարականը, ցոլացնելով իր մէջ մեր դաւանանքը, մի և նոյն ժամանակ մեր եկեղեցական խնկելի հայրերի սուրբ զգացումների մի ծովն է, որի յատակը խորասուզված միայն կարող է ձեռք բերել թանգարին մարդարիտները։ Այդ կողմից ահա սուզվել ցանկացողին մեծ օգնութիւն է հասցնում շնորհալի ու հմուտ մեկնող հ. Գարբիէլ Աւետիքեան իր Յացատրութիւն շարականաց անունով մասսիվ գրքով (807 երես), որ այդ կողմից միակն է։

Բայց մի այդպիսի գիրք, հասկանալի է, որ շատ քիչ մարդու ձեռք կարող էր ընկնել, ուրեմն և Շարականի

մեկնութիւնը՝ իրանով շահագրգռվողների մեծամասնութեան համար կմնար, ինչպէս եօթ կնքով կնքված մատեան Ստկայն Էմինի Շաբանից՝ ուսերէնի ծանօթ հայերի համար, միանդամայն վերցնում է այդ դժուարութիւնը, քանդելով վրայի բոլոր կնիքները, Էմինի մեծ ծառայութիւնը նրանումն է կայանում, որ նո յաճախակի կրկնվազ փակագձերի միջև, թարգմանութեան հետ, ամենապարզ կերպով տալիս է և' մեկնութիւնը, միանդամայն պարզաբանելով ու լրացնելով իմաստի այն մասները, որոնք զօրութեամբ պէտք է հասկացվէին, այն էլ՝ շատ մեծ դժուարութեամբ:

Եթէ որան աւելացնենք և այն հանգամանքը, որ ինչքան էլ Շարականի կարգացողը հմուտ լինի գրաբարին, այսու ամենայնիւ կէտադրութիւնը հեշտացնելու համար, — որ սահմանված է այստեղ երդեցողութիւնը հեշտացնելու համար, — առաջին ու գլխաւոր արդելքն է հանդիսանում իմաստն ըմբռնելու գործում, որ, սակայն, թարգմանողը բոլորովին վերցրել է, այն ժամանակ հասկանալի կլինի, թէ ինչ տստիճան գնահատելի աշխատութիւն է Շաբանից:

Եւ, որ պակաս գնահատելի չէ, Շարականը թարգմանված է ուստաց ոչ թէ զուտ գրական, այլ եկեղեցական լեզուի ձեերը պահպանելով:

**Այժմ՝ մի քանի նկատումներ։**

Թէպէտ թարգմանողը գրքի վերջը կցել է վրիպակ-ները, բայց, ինչպէս երկում է, նրանցից մի քանիւը բաց է թողել, որինակ,

**«Արարշականի» մէջ.**

1) . . . ոռորը հարսանեացն այն հայցեցէր ընդ ձեզ լինիլ մեզ պարակից . . .

. . . молите (Бога)—да сдѣлаетъ Онъ насть участни-  
ками въ твоемъ бракѣ съ вами . . . (355).

Մինչդեռ պէտք է լինէր՝ въ вашемъ бракѣ съ вами,  
քանի որ խօսքը առաքեալների է վերաբերում։

2) «Օրհնեմք զքեզի մէջ».

.. Է՞լ և առ մեզ յերբորդ ժամուա»

.. сонди и къ пимѣ въ семъ третъемъ часу (359).

Պէտք է լինէր՝ сонди и къ намѣ . . .

Էմին թարգմանութեան ժամանակ երբեմն զանցառութիւններ է թոյլ տվել, բաց թողնելով բառեր կամ տողեր։ Օրինակ, սնօրինարաց բառը մի քանի տեղ, մի տեղ էլ անդրանիկ՝ չն թարգմանված։

3) «Կանոն Յավակիմայ և Աննայի». Որ յանէից բանիւ դոյշցուցեր զաշխարհու ամենայն. այսօր մարգարեալ սնօրինարաց ի յԱննայէ . . .

Ты, словамъ создавшій изъ ничего весь міръ, нынѣ человѣколюбиво воплотившиесь, положилъ черезъ посредство Аины . . . (5).

«Կանոն Երրորդի աւուր» Լակից Հօր և Հոգւոյն անսկիզբն Որդի անմայր յառաջնութիւն անդրանիկ և ընդ Հօր յաւխեան։

Сыть безначальный, единосущный Отцу и Духу, (рожденный) первоначально безъ матери отъ Отца вѣчно съ Нимъ (пребывающій) (18).

4) «Եարական սրբոյն Սարգսի զօրավարին». Սաղաւորտ յուսոյ անմահ բանին եղեալ ի գլուխ մերոյ իշխանին. սուսեր տղոյ վանան նաւատոյ Տիբուտաւէր զօրապետաց. երագահաս սուրբդ Սարգիս ամուր պարիսպ ընտիր հեծելոց . . .

Шлемъ надежды, надѣтый безсмертнымъ Словомъ на голову нашего Повелителя, мечъ въ десницахъ военаачальниковъ—Святой Сергій, скорый на помощь, прѣпкная стѣна избранныхъ всадниковъ! . . (66).

Բաց է թողնված «վահան հաւատոյ քրիստոնասէր զօրաց» տողը։

Դիրքը բաւական հարստացրել է ծանօթութիւններով, բայց ամէն փոխարերական իմաստ չէ բացատրել։ Օրինակ։

5) Սմին նման տայ աւետիս . . . , նստեալ ի յէշ և յաւանակ կրկին աղանց դու օրինակ . . .

Подобно сему . . . , сидя на осаѣ и осленкѣ, прообразующихъ два народа . . . (125).—**ԶԵՐԱՅՄԱՐԵԼ**, **ԹԵՇՎԱՐԵԼ** «два народа» **ասվածները**.

**Էմին թոյլ է տվել և մոքի սխալներ։ Օրինակ.**

6) «Այսօր անձառայի մէջ».

. . . զլիոյս, առէ, չէ ինչ պիտոյ լուացումն ջրոյ, զի լուացեալ է. ստիցդ պէտք են մաքրութեան յօդիլ ի գլուխս որբութեամբ։

. . . Иисусъ сказалъ: нѣтъ надобности въ умовеніи твоей головы водою, ибо она умыта; ноги твои пуждаются въ очищениі, дабы очищеныя, онѣ могли соединиться со мною.—Главою (153).

Հ. Աւետիքեան երկու կերպ է բայցատրում՝ այդ պարբերութիւնը։ 1) Գլուխս ասելով հասկացվում է Պետրոս առաքեալի մէջ գլխաւորը, այն է՝ հոգին, որ արդէն մաքրված է ծանր արտաներից. մնում է, որ զգայական անմաքուր մասներն էլ, որոնց օրինակը ոտքերնին, նոյն պէս մաքրվեն։ 2) Շնորհալին, այլարանօրէն խօսելով, գլուխ իրան Քրիստոսին է անուշանում և ոտքեր՝ աշակերտներին, կամենալով ասել՝ ի՞նձ, որ ձեր գլուխն եմ, լուացվել չէ հարկաւոր, այլ ձեզ (որ իմ ոտքերն էք) է հարկաւոր մաքրվել, որ կարողանաք միանալ ի՞նձ։

Էմին դրանցից ընդունել է առաջին բացատրութիւնը, այն է՝ խօսելով գլխի ու ոտքերի մասին, Յիսուս կամենում էր առաքեալներին՝ նրանց ոտքերի լուացումով ներգաշնակութիւն պահպանել տալ իրանց մարմնի զգայական մասների ու հոգու միջի։ Սակայն, ինձ թվում է, թէ գործածելով «գլուխս բառը առաջին դէմքով (գլխոյս) և «ոտք» երկրորդ դէմքով (ստիցդ), Յիսուս կամենում էր ներգաշնակութիւնը պահպանած լինել ոչ այնքան առաքեալներից իւրաքանչիւրի մարմնակազմի մէջ, ինչքան ուսուցչի ու աշակերտների միջի։

Յամենայն դէպս, Էմին ազատ էր՝ ուզած ընտրութիւնն անելու։

Բայց բանը նրանումն է, որ իր ընտրած մեկնութիւնը

մացնելով անդամ, նու մժերի յեղաշըզում է թոյլ տվել։  
Դիենք այսուեղ երկուոր էլ թարգմանութիւնը, բնչ  
պէս ես եմ հասկանում։

Գրաբար. — . . Յիսուս ասում է, ե՞ս՝ որ ձեր զլուխն  
եմ, լուացվելու պէտք չունեմ, որովհետեւ լուացված,  
որբիած եմ. դուք՝ որ իմ սոռփերն եք, դուք պէտք է  
լուացվելով, որբիալով, միանաք ինձ։

Ալուսերէնը. — . . Յիսուս ասեց. Կարիք չկայ, որ ոն  
գլուխութ լուանամ ջրով, որովհետեւ լուացված է. ոն սոռ-  
փերին է հարկաւոր մաքրվելը, որպէս զի, մաքրված լինե-  
լով, կարողանան միանալ ինձ, որ ձեր Գլուխն եմ։

Թէ ինչքան, — խօսելով մեզմ լեզուով, — անհեթեթ է  
մի տյապիսի ըմբանում, բայ ինքեան հասկանալի է։

Էմինի թարգմանութիւնը պէտք է ունենար ոչ թէ  
այն խմբագրութիւնը, որով նա լոյս է տեսել, այլ հետե-  
ւելով երկու խմբագրութիւններից մէկն անդաման։

1) . . Իսусъ сказаъ: иѣть подобности въ умовеніи  
твоей головы водою, ибо она умыта; ноги твои пуждаются  
въ очищениіи, дабы очищеныя, оиъ могли соединиться съ  
головою твою.

1) . . Յիսուս ասեց. Կարիք չկայ, որ ոն գլուխութ  
լուանամ ջրով, որովհետեւ լուացված է. ոն սոռփերին է  
հարկաւոր մաքրվելը, որպէս զի, մաքրված լինելով, կարո-  
ղանան միանալ ոն զիսին։

2) . . Իսусъ сказаъ: иѣТЬ подобности въ умовеніи го-  
ловы водою, ибо она умыта; ноги пуждаются въ очищениіи,  
дабы очищеныя, оиъ могли соединиться со мною — Главою.

2) . . Յիսուս ասեց. Կարիք չկայ, որ գլուխը լուացվի  
ջրով, որովհետեւ լուացված է. սոռփերին է հարկաւոր  
մաքրվելը, որպէս զի, մաքրուած լինելով, կարողանան մի-  
անալ ինձ, որ Գլուխն եմ։

Ես ընդունում են վերջին խմբագրութիւնը։

7) Քնդ բազարջին հաց անխմօր ետ զմարմինն իւր  
զերկնաւոր, զիուսածինն անսերմիաւոր, զանազական և  
զհոգեար . . .

Вместо опреенока Онь дасть неквасный хлебъ—тѣло свое небесное, дѣворожденное, бессѣменное, нетаинное и духовное . . . (154).

**Հ.** Աւետիքեան Շնորհալու այդ խօսքերը երկու կերպ  
է մեկնում։ Առաջին, Բաղարջի փոխանակ, Քրիստոս  
տվեց անխմոր հաց, այսինքն՝ իր մարմինը, ոչ նմանու-  
թեամբ անխմոր հաց է, լինելով երկնաւոր, կուսածին,  
անապական ու հոգեոր։ Երկրորդ, Բաղարջի փոխանակ,  
որ է անխմոր հաց, Քրիստոս տվեց մեղ իր երկնաւոր,  
կուսածին, անապական ու հոգեոր մարմինը։

Երկու մեկնութիւնների տարրերութիւնը պարզ է։

Առաջինում բացատրված է անխմոր հացի նմանական  
նշանակութիւնը, երկրորդում՝ բաղարջի պարզ նշանա-  
կութիւնը։ Երկու գեպքումն էլ շարականի այդ տան  
իմաստն այն է, որ հին ուխտի բաղարջի փոխանակ, Քրիս-  
տոս տվեց իր մարմինը։ Այս պատճառով, աւելի նպա-  
տակայարժարն այն կլինէր, որ էմին ընդունէր երկրորդ  
լոմբագրութիւնը, այն է։

Вместо опреенока—неквасного хлеба Онь дасть тѣло свое небесное . . .

Նա այսպէս պէտք է թարգմանէր և ոչ այլապէս՝  
մանաւանդ այն պատճառով, որ Շարականի այդ տան  
շինուածքը նախադասութեան անդամների ուղղակի այդ  
գասաւորութիւնն ունի։

Յամենայն գէպս, Էմինի ոյս աշխատութիւնը այն  
մեծ ծառայութիւններից մէկն է, որ հայ գիտնականը երբ  
և է կարող է անել իր ցեղին հանրապէս ու իր եկեղե-  
ցուն մասնապէս։

Էմմ. Բան. Նազարեան.